

Հր. Գրիգորյան

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի առանձին գործերը մեր պարբերականներում և օրաթերթերում տպագրվել են դեռ 1937 թ., սակայն նրա անույնիկ գիրքը՝ «Օրերի հետ» բանաստեղծությունների ժողովածուն լույս տեսավ 1945 թ., որը և իրավամբ պետք է համարել նրա արդեն ձևավորված ստեղծագործական կյանքի ուղիգրքը: 1947 թ. լույս տեսավ նրա բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն՝ «Ջանգվի ափին» խորագրով: Երրորդ ժողովածուն՝ «Իմ բարեկամները» լույս տեսավ 1951 թվականին և արժանացավ ամենաբարձր դնահատականի՝ Ստալինյան մրցանակի:

1

Սիլվա Կապուտիկյանն այն երջանիկ սերնդի ներկայացուցիչն է, որը հին աշխարհը չի տեսել, աշխարհ է մտել «անխոց սրտով ու պայծառ», ծնվել հասակ առել ու ձևավորվել է սովետական ազատ արևի տակ: Նրա մանկությունը եղել է անվիշտ ու թեթև, օրերը եղել են «խաղ ու զնդակ», վայելքը՝ ծաղկաձորի կանաչ անտառը՝ «պիոներական ճամբարն ու խարույկը»: Ուրախ մանկությունը հետագայում իր դրոշմը դրել է նրա ողջ ստեղծագործության վրա: Երջանկության «զգացումն այդ հազարախինդ», ինչպես ինքը բանաստեղծուհին է վկայում, ծնվել է իր հետ, նրան ժպտացել է դեռ օրորոցում:

Երբ քնից զարթնող իմ աչքերի դեմ
Խաղատիկնիկի գույներ եմ տեսել՝ վառ, զարմանալի,
Ու մինչև հիմա աշխարհի հանդեպ
Հոգիս այդ մանուկ հիացքով է լի¹:

Վշտի զգացումը նա քաղել է միայն անցյալի կյանքը նկարագրող զրբերից: Թումանյանի Գիքորի ողբերգական պատմությունն է եղել բանաստեղծուհու առաջին վիշտը: Այդ մասին է պատմում Ս. Կապուտիկյանն իր «Թումանյանի Գիքորին» բանաստեղծության մեջ.

Ես զգացել եմ ասես քեզ հետ քաղցը քո լոին,
Ու մեր տաշտիցը միշտ քեզ հաց տալ եմ ուզել:

Եվ զայրույթով է լցրել մահդ հոգին իմ բարի,
Անմեղ, անմեղ իմ սրտում վերքեր է բացել,
Խուժելով հաշտ լույսի մեջ իմ մանկության աշխարհի,
Փոքրիկ Գիքոր, առաջին իմ վիշտն ես դարձել...²

¹ Ս. Կապուտիկյան, «Ջանգվի ափին», Երևան, Հայպետհրատ, 1947 թ., էջ 71:

² Նույն տեղում, էջ 84:

Պատմությունից ու գրքերից է հիմնականում քաղել Ս. Կապուտիկյանը նաև իր պատկերացումներն իր հայրենիքի ու իր ժողովրդի դառն անցյալի մասին: Սակայն այստեղ նա ունեցել է նաև մի այլ, ավելի անմիջական ու ավելի զորեղ աղբյուր: Իր ժողովրդի անցյալի վիճակին նա ծանոթ է նաև իր հարազատների կյանքի կենդանի օրինակով:

Թողել է տաալս իր տունն ու այգին,
Ու հին իր հարկից իր սիրտը պոկած,
Սարսափած ու որբ իր մանուկներին
Հրդեհից, մահից հաղիվ ազատած,
Կիսամերկ, բոպիկ՝ մի մութ գիշերով
Գաղթի ճամբան է բռնել՝ արյունի.
Ետևում՝ փայլը սև յաթաղանի,
Դեմը՝ Արաղի ջրերը խռով...
Ու մինչև օրս էլ՝ խղճալով նրան
Մենք չենք հարցնում, թե ոնց է եղել,
Որ իր Արծրունը՝ իր փոքրիկ տղան
Գաղթի ճամբեքին կորել է, մեռել...¹

Որ ժողովրդի երեկվա դառն անցյալի ու այսօրվա երջանիկ օրվա այս երկու զգացումներն են, որ որոշել են նրա պոետական աշխարհազգացման հետագա ամբողջ էությունը: Երկու ակունք, որոնցից առաջինը բերել է թախիծ ու մորմոք, երկրորդը՝ խինդ ու երջանկություն: Երկու տարբեր տկունքներից են սնվել նաև բանաստեղծուհու նախնական ստեղծագործական որոնումները: Մեկը կենդանի իրականությունն է եղել՝ իր վառ ու բաղմբերանգ դույներով, մյուսը՝ անցյալի գրականությունը, գրքերից մեխանիկորեն կատարած փոխառությունները, որոնք բավական լուրջ շեղումների ու սայթաքումների պատճառ են հանդիսացել երիտասարդ բանաստեղծուհու համար:

2

Սիլվա Կապուտիկյանը գերազանցապես լիրիկ բանաստեղծ է: Խոհական լիրիկան է նրա ստեղծագործության գլխավորն ու հատկանշականը, նրա բանաստեղծական տարերքը: Նրան հուզող հարցերի շրջանն է հայրենիքը, մայրությունն ու մանկությունը, սերը, ժողովուրդների երջանկությունը, պատերազմն ու խաղաղությունը: Իվ այդ ամենը՝ բեկված արդեն հիշատակված երկու տարբեր զգացումների և երկու տարբեր ստեղծագործական մոտեցումների միջով: Քանի որ այդ այդպես է՝ բնականաբար և երջանկությունն ու տրամոթությունը, խինդն ու թախիծը զուգահեռաբար անցնում էին նրա առաջին երկու ժողովածուներում: Խինդի և երջանկության զգացումները, սակայն, նրա բանաստեղծություններում հնչում էին ավելի հարազատ և անմիջականորեն, ավելի վարակիչ էին ու հուզիչ, մինչդեռ տրամոթությունն ու թախիծն ավելի շինծու էին ու անհամոզեցուցիչ, ավելի զրբային էին ու փոխառված, չէին լիսում բանաստեղծուհու ներքնաշխարհից:

¹ Ս. Կապուտիկյան, «Զանգվի տփին», Երևան, Հայպետհրատ, 1947, էջ 27:

Սիւվա Կապուտիկյանի ստեղծագործութեան կենտրոնական թեման, նրա յիշատակը մոտիվը սովետական հայրենիքն է իր հերոսական գործերով, երջանիկ առօրյայով, ապագայի վառ հեռանկարներով:

Հայրենիքի թեման հին է, բայց ամեն մի կոնկրետ ժամանակաշրջանում և ամեն մի գրողի մոտ ըստ նրա դասակարգային ըմբռնման նա յուրահատուկ է արտահայտվել:

Հայրենիքը, իր բազմաշարժար ճակատագրով, անցյալի մեր դեմոկրատ յրողների մոտ հաճախ կոչվել է «ողբի հայրենիք», «որբի հայրենիք», «լացի հայրենիք», և այդ հայրենիքի հիշատակումն ավելի շատ արտմոլյան ու թախծի, վշտի ու դառնութեան զգացումներ է առաջացրել, քան խինդ ու բերկրանք: Այդպես է եղել դարեր շարունակ:

Սակայն փոխվել է ժամանակը, փոխվել է պատկերը: Հոկտեմբերյան Մեծ ռեւոլյուցիան, բոլշևիկների անձնավոր պայքարը փրկութուն բերին մեր երկրին, նրա «տառապանքներին բերին ամբողջում»: Հնի փլատակներից բարձրացավ նոր, Սովետական Հայաստանը, ուր լացն ու վիշտը փոխվեց խնդութեան: Իր նորոգ հայրենիքի խինդն ու բերկրանքն է երգում Կապուտիկյանը, նրա վերածնունդն ու առույգ զավակների երջանկությունն է նա փառաբանում:

Իմ նոր, իմ հզոր, անկոր հայրենիք,
Քո որդիները՝ առույգ կորովի,
Քո աղջիկները՝ գարուններով լի,
Նրանք քո հույսն են, քո շունչը գալիք.
Որ քո աշխարհին թարմութիւն բերել՝
Պատանութեամբ են երակդ լցրել¹:

Աղետավոր դարերի մեջ հայ ժողովուրդը կորցրեց ոչ միայն իր պետականությունն ու անկախությունը, այլև նրա մի հատվածը ցրվելով աշխարհով մեկ, զրկվեց հայրենիքից: Հայրենիքը նրա համար դարձավ մի հուշ, մի բաղձալի երազանք: Մնաց հայրենիքի գեղեցիկ բնության լույն կարագիրը, խոսկ այդ բնության առանձին հրաշալիքները, ինչպես Մասիսը, Սևանը, Արաքսը, դարձան հայրենիքի խորհրդանշաններ, ժողովրդի սրտին միշտ հարազատ ու սիրելի: Այսօր, շնորհիվ սովետական կարգերի, հայ ժողովուրդը ոչ միայն նորից ձեռք բերեց իր հայրենիքը, այլև վերաստեղծեց իր պետականությունը: Հայ կուլտուրան իր ծաղկման ու վերածնունդի ոսկեդարն է ապրում, և այդ բոլորը՝ շնորհիվ սովետական սոցիալիստական հասարակարգի ստեղծման: Այս նոր պայմաններում այլևս ոչ թե լույն բնությունն է, որ քաշում է դեպի իրեն օտարության մեջ ցրված ողջ հայությունը (այդ բոլորը դարերով կար, բայց մարդիկ փախչում էին այնտեղից, որովհետև կյանքն այնտեղ դժոխք էր վերածվել), այլ այն նոր հասարակարգը, նոր սոցիալիստական հայրենիքը, որ մարդու համար ապահովում է ազատ ու երջանիկ կյանք: Բնականաբար «աշխարհում հայի համար» արդեն խորհրդանիշ է դառնում ոչ թե հայրենիքի բնությունն իր հրաշալիքներով, այլ ինքը նորոգ երկիրն ամբողջովին վերցրած:

Դու թանկ ես մեզ որպես դրոշմ ցողված արյամբ զոհերի,
Դու մոր նման նվիրական, դու՝ մանկան պես սիրելի...

¹ Ս. Կապուտիկյան, «Ջանգլի փին», Երևան, Հայպետհրատ, 1947, էջ 22:

Սիրվա Կապուտիկյանի՝ հայրենիքին նվիրված բանաստեղծությունների շարքի երկրորդ ու բնորոշ գիծը՝ դա հայրենիքի աշխարհագրական հասկացողության սահմաններից դուրս դալն է և հայրենիքի նոր ըմբռնումը։ Առհասարակ ո՞րն է մարդու հայրենիքը։ Այն լեռներն ու ձորերը, այն դաշտերն ու անտառները, այն գետերն ու աղբյուրները, որի շրջապատում նա ծնվել ու մեծացել է։ Այն լեզուն ու կուլտուրան, որ մանկուց նրան հոգևոր սնունդ էն տվել։ Իհարկե, այս ամենը շատ կարևոր նախադրյալներ են հայրենիք հասկացողության համար։ Սակայն լինում են պայմաններ, երբ մարդիկ փախչում են իրենց հայրենիքից, երբ հայրենիքը բանտ ու տանջանաց վայր է դառնում ժողովրդի համար, հետևապես կա մի շատ ավելի կարևոր բան՝ տիրող սոցիալական-քաղաքական իրավակարգը, որը կարող է հայրենիքը հալածադատ ու սիրելի դարձնել կամ դժոխքի վերածել։

Մեր երկրում ստեղծված նոր, սոցիալիստական հասարակարգն է, որ առավել սիրելի դարձնելով մեր հայրենիքը, տվել է սովետական մարդկանց իրենց անմիջական ծննդավայր հանդիսացող հայրենիքից բացի, նաև մի առավել լայնարձակ ու հզոր հայրենիք — Սովետական մեծ Միությունը։ Այդ Միության անխորտակ հովանու տակ, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքումն է, որ աճել ու ամրապնդվել են սովետական բոլոր ռեսպուբլիկաները։ Սովետական ժողովուրդների անքակտելի բարեկամությունը, որը ցեմենտված, սրբազործված է ազատության համար միատեղ թափած արյամբ՝ հանդիսանում է մեր մեծ Միության անպարտելիության առաջին դրավականը։ Ժողովուրդների բարեկամության այդ բարձր գիտակցությունն է, որ ամեն մի սովետական մարդու հոգին լցնում է սիրո խոր զգացումով դեպի սովետական մեծ հայրենիքը։ Այդ զգացումն է հուզում նաև երիտասարդ սովետական հայրենասեր բանաստեղծուհուն՝ Սիրվա Կապուտիկյանին։ Նրա համար լենինդրագր նույնքան սիրելի է, որքան Երևանը, Ուկրաինան ու Ղազախստանը իր հայրենիքի պես հարազատ են իրեն։ Երբ նա շրջում է Ղազախստանի մայրաքաղաքում՝ Ալմա-Աթայում, Արարատի նման նրան ժլպոտում է հավերժաձյուն դադաթ Ալա-Թաուն։

Ինձ ծանոթ է թվում այստեղ ամեն մի լեռ,
Հարազատ է այստեղ ամեն մի բան.
Ասես Հայաստանից մի կտոր են պոկել
Ու բերել են այստեղ՝ Ղազախստան։

Այդ ինձ հետ է ծնվել մտերմությունն այս,
Պայքարներով, կամքով, արյամբ սրբազործվել.
Նրա համար Կերչում հայ գինվորը ընկավ,
Որ ևս այս մայթերով բարձրանամ վեր։
Ու քայլում եմ ահա, խորթ չէ հարավուհուս
Այս արևը, այս շոգ խենթությունը ամռան,
Մինչ ծեր Ալա-Թաուն ձյունաշխարհից իր լույս
Ինձ է նայում իմ հայր Արարատի նման...

Սիւլվա Կապուտիկյանի հայրենիքին նվիրված բանաստեղծությունների շարքում կան նաև լիրիկա-պեյզաժային բնույթի բանաստեղծություններ, որոնք արտահայտում են հայ ժողովրդի սերը դեպի իր երկրի բնության վեղեցկությունները։ Դրանք թեպետև զուրկ չեն պատկերավորությունից ու հուզականությունից, սակայն նրանց մեջ ավելի գերիշխողը սանտիմենտալ, արտաքին-դեկորատիվ նկարագրողականությունն է. դրանք ավելի շուտ հնի նմանողությամբ գրված իմիտացիաներ են, որոնց մեջ արտաքին արտահայտիչ ու տպավորիչ պատկերը ձեռք է բերվում ի հաշիվ գեղարվեստական հղացման նվազ խորության և ճշմարտացիության։ Այդ շարքի բանաստեղծությունները չլինելով օրիգինալ ու թարմ՝ ավելի մտացածին են, քան իրոք են բանաստեղծուհու ներքնաշխարհից, ուստի և մեծ մասամբ զուրկ են կենդանի զգացողականությունից։ Ահա մի նմուշ այդ կարգի բանաստեղծություններից.

Արև, արև, արև,
Հայաստանի արև,
Անզուգական արև,
Հավերժական արև...

Չէ՞ որ դու մեր մեջ ես,
Դու մեր հողի մեջ ես,
Մեր մրգերի, գինու,
Մեր խաղողի մեջ ես՝

Այստեղ խորություն չունեցող մակերեսային բովանդակությունը թելադրել է նաև բանաստեղծության նույնքան մակերեսային և պրիմիտիվ ձևը։

Ինու՞թյան, անցյալի տրադիցիոն մերկ գովերգումն այսօր արդեն չի կարող որևէ չափով բավարարել սովետական ընթերցողին։ Սկզբունքային այն նորը, որ արդեն միս ու արյուն է դարձել սովետական գրականության համար, դա պոեզիան, գրականությունը պայքարի զենք դարձնելն է։ Մեր օրերի պոեզիան պետք է արտահայտի սոցիալիզմ կառուցող մարդկանց մեծ գաղափարներն ու զգացումները և ոչ թե զբաղվի դեկորատիվ բնության սառը նկարագրությամբ։ Առավել ևս, երբ խոսքը վերաբերում է սոցիալիստական հայրենիքը դավերողող պրականությանը։ Այստեղ հեղինակի հույզերը պետք է ազդեցած լինեն անհատական պատասխանատվության զգացումով դեպի իր երկրի ճակատագիրը։ Մարդ-անհատի և մարդկային կուլեկտիվի զղացմունքները պետք է միաձուլվեն՝ արտահայտելով պայքարի ու ստեղծագործական ծարավի այն մեծ հույզերը, որով համակված է մեր ամբողջ հասարակայնությունը։ Բնությունը վերափոխող մարդն ու նրա հույզերն են լինելու դրոշմադրության կենտրոնում և ոչ թե անկենդան բնությունը։

3

Սիւլվա Կապուտիկյանի շոշափած հարցերի մյուս շարքը կազմում են այն «հավիտենական» թեմաները, որ բոլոր ժամանակներում հուզել են բանա-

1 Ս. Կապուտիկյան, «Ձանգվի ափին», Երևան, Հայպետհրատ, 1947, էջ 30։

ստեղծներին: Դրանք սիրո, մայրության ու մանկության, մահվան պրոբլեմներն են: Բուրժուական ամբողջ գրականությունը «ողողված» է այս հարցերով, և նրանցից յուրաքանչյուրն առատ նյութ է տվել բանաստեղծներին «փիլիսոփայելու» կյանքի «ունայնության» մասին՝ հոռետես ու մոռյալ զգայումներ արտահայտելու համար, որովհետև կյանքն ինքնին ուրախ չի եղել: Եթե սերն է երգվել, ապա մեծ մասամբ դա եղել է դժբախտ, խորտակված սեր, որովհետև մարդկային հարաբերությունների այդ ամենաուրախ արտահայտությունն անգամ հաճախ մթափնվել է կամ նահապետական կենցաղային խավար սովորություններով, կամ փողային հարաբերություններով, կամ մարդկային հասարակության դասային քաժանմամբ (սիրող անհավասար դույզներ՝ հարուստ և աղքատ, ազնվական ու ճորտ և այլն): Եթե մանկությունն ու մայրությունն է երգվել, ապա երգվել է սոցիալական անհավասարության պայմաններում. դա ևս մեծ մասամբ դիտվել է որպես դժբախտություն, որովհետև ծնվող մանուկն իր ամբողջ կյանքում անուրախ ու չարքաշ կյանքի դառնությունը պիտի ճաշակեր: Եվ այդ բոլորի վրա ծանրացած է եղել մահվան դառնությունը: Անուրախ ու անիմաստ կյանքում մարդը շարունակ երգել է ու սպասել ինչ-որ երջանկության, և միշտ նրան թվացել է, որ վաղաժամ մահը կտրել է նրա սպասումի թելը, զրկել է նրան երջանկությունից:

Ինչ նոր մոտեցում ունի այդ «հավիտենական» թեմաներին սովետական երիտասարդ բանաստեղծուհին:

Սոցիալիստական նոր հասարակարգում նախ և առաջ մարդը դադարում է ամբողջ կյանքում դեպքերի նեղ անհատական շահերի լաբիրինթոսում: Մարդ-անհատը ձուլվում է մարդկային կոլեկտիվին, դառնում նրա անխզելի մասնիկը: Նա ոչ թե ամբողջ կյանքը ծառայեցնում է իր անձնական պետքերի ու շահերի բավարարմանը, այլ ընդհակառակը, նրա կյանքի բարձրագույն իմաստը դառնում է կոլեկտիվին ծառայելը: Այդ ճանապարհով է նա ձեռք բերում նաև իր երջանկությունն ու անհատական կարիքների բավարարումը: Վերանում է մարդ-անհատի և կոլեկտիվի— հասարակության մեջ եղած հակասությունը, մի հակասություն, որը տիպիկ է ու բնորոշ կապիտալիստական հասարակության համար, որը կապիտալիստական իրավակարգում բերում է մարդ—անհատի և հասարակության—պետության շահերի անխուսափելի բախում: Նոր հասարակարգում մարդու գոյությունն իմաստավորվում է, այլևս նա սահմանափակված չէ նեղ անձնական ճղճիմ կրքերի շրջանակում: Մարդու գոյությունը դադարում է պատան հաց ճարելուն ծառայելուց: Մարդը դառնում է համամարդկային մեծ իդեալների համար պայքարող մարտիկ: Լայն է նրա հորիզոնը, նպատակը մեծ, գաղափարները վեհ: Այլ է նոր մարդու աշխարհազգացումը, անգամ կորուստը, մահը սարսափելի չէ, եթե կյանքը ծառայեցված է ընդհանուրի մեծ գործին: Ահա այդ նոր վերաբերմունքը դեպի մահը, նոր մարդու, կոլեկտիվի մի մասնիկը կազմող մարդու տրամադրություններն է արտահայտում ի. Կապուտիկյանն իր բանաստեղծություններում.

— Այ աղբյուր, ուր ես գնում,
Վայ աղբյուր, ուր ես գնում,
Ծովերում, ծովերի մեջ
Կկորչես— զուր ես գնում:

— Դաշտերում պապակ ու կեզ
 Պաղիկներն ինձ են մնում,
 Դաշտերին տանում եմ ես,
 Հով ու զով ջուր եմ տանում:
 Թող գնամ, ծովը գնամ,
 Թող կորչեմ ծովերի մեջ,
 Մենակ թե ծաղկած մնան
 Հայրենի գաշտերը պերճ...¹

Հորդացող կյանքի անհուն զգացումն ու երջանկությունն են արտահայտում մայրությանն ու մանկությանը նվիրված բանաստեղծությունները: Ինչպես արդեն ասացինք, իրեն՝ բանաստեղծուհուն մանկությունն ուրախ խինդով է լցված եղել, այդ արդեն կրկնվող, երջանիկ մանկության հույզերն են առաջանում նրա մեջ, երբ տուն վերադառնալիս իր մանկիկն է փարվում ձրա փեշերին.

Այդ մանկության ե՞րբն էր նորից
 Իմ ականջին կանչեց քաղցրիկ,
 Այդ աղբյու՞րն էր դեմի սարից
 Դեմըս ելավ, ժպտաց մանրիկ.
 Այդ ծաղկո՞ւնքն էր հաղարաղարդ
 Ոտքերիս տակ փովեց կրկին.
 Այդ հայրենի հո՞վն էր մարմանդ
 Եկավ-դիսլավ իմ ոտքերին.
 — Երբ տուն դարձա՞ մանկիկս էր այդ
 Վաղեց, փարվեց իմ փեշերին...

Անհուն երջանկության աղբյուր է մանուկը, որ ծաղկում է կյանքում ուրախ ու խնդաշող, երջանիկ ապագայի հավատի զգացումով լի, կյանքում, ուր ամեն ինչ կենսավետ է, «ուր աճում են թիթեռ, ծաղիկ ու իմ մանկիկս էլ նրանց հետ...»: Սակայն այդ երջանիկ մանկությունը մթազնեց պատերազմի սև ամպը: Ֆաշիստ բարբարոսներն արյուն ու ավեր տարածելով շորս դին՝ չէին խնայում նաև մանուկներին: Եվ դա ցավոտ խորհրդածությունների առիթ է տալիս բանաստեղծուհուն: Ոսկեղեն օրորոցում, խաղաղության թևի տակ քնած է իր մանուկը.

Ահա թռավ դեպի քեզ՝ քեզ խաղընկեր մի թիթեռ,
 Ուղեց խաղալ ծաղկանց հետ աշիկների քո կապույտ,
 Տեսավ փակված են նրանք, թռավ-գնաց քնքշաթև,
 Նա էլ շուղեց վրդովել խաղաղությունը անփույթ:
 Եվ ես՝ քո լույս, քո անմեղ օրոցքի մոտ ծնրադիր՝
 Խորհում եմ լուռ ու ցավով.— օ, այս պահին, երբ ահա
 Քեզ վարթնեցնելը անգամ թվում է բիրտ մի ոճիր,
 Ո՞նց են նրանք կամենում սուր բարձրացնել քո վրա...²

¹ Մ. Կապուտիկյան. «Օրերի հետ», Երևան, Հայպետհրատ, էջ 12:

² Նույն տեղում, էջ 59:

Եվ բանաստեղծուհին զայրույթով կտակում է իր փոքրիկին — «Իմացիւ, տղաս, թշնամին է այգ խռովել արդար քունդդ դեռ մանկուց», ուստի՝

Քնիր շանթերի, որոտների մեջ,
Մանկուց սովորիր ատել թշնամուն,
Քանզի նա մանկուց կյանքդ խռովեց...

Ֆաշիստ բարբարոսների հարձակումը մեր երկրի վրա խռովեց ոչ միայն մեր երջանիկ սերնդի մանկությունը, այլև մթագնեց մեր ամբողջ կյանքը: Մայրերը զրկվեցին զավակներից, կանայք՝ ամուսիններից, երիտասարդ աղջիկները՝ սիրած տղաներից: Ժողովրդի զավակները մեկնեցին ռազմաճակատ՝ հայրենիքի հողը՝ մաքրելու անարգ զավթիչներից: Շատերը կորցրին այդ սրբազան կովում իրենց հարազատ ու մոտիկ մարդկանց: Բնականաբար այդ ամենը չէր կարող իր կնիքը չդնել բանաստեղծուհու գործերի վրա: Նա ևս սովետական բոլոր գրողների հետ իր երգը ծառայեցրեց հայրենիքի պաշտպանության գործին, նա մարտի կոչեց իր եղբայրներին, որ հայրենիքի փառքն անմահ պահեն՝

Լեռները հպարտ վեր են բարձրանում,
Որ փառքդ վերև տանեն, հայրենիք,
Արծիվները վեա երկինք են հասնում,
Որ փառքդ երկինք տանեն, հայրենիք.

Իսկ զավակներդ, զավակներդ անգին
Իրենց արյունն են տալիս սրտագին,
Որ փառքդ անմահ պահեն, հայրենիք...²

Սակայն մարտակոչի հետ միասին, բանաստեղծուհու երգերում պատերազմի տարիներին հնչեցին նաև, մինչ այդ իրեն անժանոթ, թախիծի երգերը: Եվ դրանք արտահայտվեցին ամենից շատ սիրո շարքին նվիրված բանաստեղծություններում:

4

Սիրվա Կապուտիկյանի ստեղծագործության մեջ թե քանակով և թե բազմազանությամբ մեծ տեղ է գրավում սիրո լիրիկան: Եվ դա բնական է: «Չէ՛ որ սիրո հեքյաթը սկիզբ չունի, վախճան չունի...»: Այստեղ էլ, ինչպես բոլոր իր շոշափած թեմաներում, Ս. Կապուտիկյանը նախ և առաջ կենսախինդ է, որովհետև սերը «երազ է տվել նրա կյանքին» ու «երազներին տվել է կյանք»:

Սիրածի հետ թափառելիս նա անհունորեն երջանիկ է զգում իրեն, և կուղեր, որ միշտ ճանապարհը երկար ու անվերջ լիներ.

¹ Ս. Կապուտիկյան, «Օրերի հետ», Երևան, Հայպետհրատ, 1943, էջ 56:

² Նույն տեղում, էջ 101:

Նրբ դու ես ինձ ուղեկցում,
 Ինձ մեր տան փոշոտ ճամբան
 Թվում է մարմար ու ձյուն,
 Ինձ գորգ է թվում դարնան:
 Ճամբեքը՝ հեռու, հեռու,
 Աշխարհը՝ անծայր ու լայն,
 Ինչո՞ւ է, ինչո՞ւ, ինչո՞ւ
 Մեր տունը մոտիկ այսքան...՝

Սակայն սիրային լիրիկայի մեջ է, որ ամենից շատ սայթաքել է բանաստեղծուհին և ամենից ավելի անհաջողության հանդիպել:

Ի տարբերություն մյուս բանաստեղծությունների՝ սիրո հարցերին նվիրված երգերում Ս. Կապուտիկյանի լիրիկական հերոսը կրկնակի դեմքով է հանդես գալիս: Փաստորեն երկուսն են այդ հերոսները: Մեկի սերը խորտակվել է, որովհետև սիրած տղան զոհվել է Հայրենական պատերազմում: Մյուսը խաբված սիրո զոհն է: Առաջին հերոսը իրական է ու ռեալ իր զգացումներով և ապրումներով, հետևապես համոզեցուցիչ ու հուզող: Երկրորդը տրպիկական չէ մեր պայմաններում:

Առաջինը՝ սովետական առօրյայի մարդն է, մեր օրերի երիտասարդ կինը, որ ապրում էր անհոգս ու անվիշտ, սիրում էր ու սիրված էր, և ամբողջովին կարծես տարված էր իր երջանկությամբ: Կյանքը խաղաղ էր, երջանիկ ու զվարթացիկ: Շուրջը ծաղկում էր գարուն անխռով: Նրա սիրտը լի էր սիրով, քնքշությամբ:

Սակայն վրա հասավ մեծ փորձությունների շրջանը, նրա կյանքի մեջ ներխուժեց դաժան պատերազմը, խախտեց նրա երջանիկ կյանքը, տարավ սիրած տղային: Այժմ արդեն խիստ է նրա դեմքը և հոգսերով լի «առես» տառ տարով մեծացել ենք մենք»: Նա դառել է արդեն հուսուն, մտորուն, ճաշակելի, դառնություն ու վերք...

Օ, չէ՞ որ սիրած դաշտերի վրա
 Արյամբ է բացվել դարունն այս տարի.
 Եվ այս վարդերի թերթերում պահած
 Արյան շիթեր կան հարազատների:

Ու նրա հոգում ծովանում է ատելությունը դեպի թշնամին: Նա ցանկանում է, որ ամեն մի սիրող արտի տակ այսուհետ «յոթ վրիժավառ» սիրտ բուքախի: Եւ իր սիրած տղային նամակներ է գրում՝ կոչ անելով նրան միայն հաղթանակով տուն վերադառնալ:

Հայրենական պատերազմում զոհված հերոսները միշտ անմահ են մեր ժողովրդի սրտում. նրանց հիշատակը միշտ վառ կմնա, և ամեն անգամ նրանց հիշելիս թախիծի մշուշը անպայման թեկուղ մի պահ պիտի նստի մեր մարդկանց հոգում: Սակայն դա անկումայնության, հուսահատության թախիծը չէ, այլ մարդկային հոգին ազնվացնող տրամություն է: Որքա՞ն հասկանալի ու մարդկային են հերոսուհու ապրումները, երբ նրա հոգին մի պահ մթնում է:

1 Ս. Կապուտիկյան, «Զանգվի Ափին», Երևան, Հայպետհրատ, 1947, էջ 59:

2 Ս. Կապուտիկյան, «Օրերի հեռ», Երևան, Հայպետհրատ, 1945, էջ 62:

այն օրը, երբ երկարատև լուսաքողարկումից հետո նորից վառվում են Երևանի լույսերը: Նա հիշում է իր զոհված ընկերոջը, որն իր ձեռքով էր այդ լույսերը բերել Երևան, աշխատել էր էլեկտրակայանի շինարարության վրա: Ու անկարող պահել իր հողում այդ վիշտը՝ նա դիմում է լույսերին, անցորդներին և պատմում է նրանց իր սիրած տղայի մասին.

Մենավ սիրած Երևանի
Ու ձեր կարոտն իր սրտի մեջ.
Իր քաղկով էր ձեզ կյանք տվել,
Իր արյունով պահեց անշեջ.
Եվ դուք, լույսեր երախտագետ,
Որ վառվում եք հիմա էլի,
Ձեր շողերով անմար պահեք
Հուշը ջահել այն տղայի:

Եվ դու, անցորդ, անցնես երբ այս
Հուսառդող փողոցներով,
Բարի խոսքով հիշիր նրան,
Այն աղային հիշիր սիրով.
Որ իր այրվող սիրտն է դրել
Ասես՝ պայծառ այս լույսերում,
Որ լույսերը հավերժ վառվեն
Երևանի փողոցներում...

Սիրվա Կապուտիկյանի առաջին այս լիրիկական հերոսուհին համակված է խորը վշտով, սակայն մեղ համար հարադատ է, նրա լապրումները վարակիչ են ու հասկանալի: Սա սովետական մարդու կերպարն է իր հարուստ ներքնաշխարհով:

Հեղինակը կարողացել է պատմել նրա մասին մտրդկային պարզ բառերով, այդ պատճառով էլ այդ բանաստեղծությունները գեղարվեստական բարձր ներշնչման, ճիշտ մտահղացման արդյունք են:

Սակայն այդպիսին չէ նրա մյուս հերոսուհին, որն ամբողջովին արտահայտում թախիծի, հուսահատության, հոգնածության, միայնակության նեղ սուրեկտիվ անկումային տրամադրություններ (հատկապես «Օրերի հետ» ժողովածուում): Որտե՞ղ է տեսել բանաստեղծուհին իր երկրորդ հերոսուհուն, ո՞վ է ծառայել որպես օրինակ այդ պատկերը ստեղծելիս: Այս հարցերի պատասխանը դժվար չէ գտնել, եթե մի փոքր մոտիկից ծանոթանանք հերոսուհու արտառոց ու հիվանդադին ցանկություններին: Ահա մի նմուշ.

Կուզեմ մեկին սիրել ես անրիժ,
Ու սերս լիներ խորը, անարատ,
Իսկ նա շսիրեր, շսիրեր նա ինձ,
Իսկ նա ծիծաղեր իմ սիրո վրա...

Եւ զարկված սիրուց, և բեկված սիրուց՝
 Սիրտս, որ միայն խնդությամբ է լի,
 Տխրեր՝ այդ քաղցր, անուշ տանջվելուց,
 Եւ լայի, լայի, և սրտանց լայի...

Դժվար չէ կոահել, թե որտեղից է ընդօրինակել բանաստեղծուհին իր հերոսուհու այս կերպարը։ Հերոսուհին կանխապես երազում է ճակատադրական, դժբախտ սիրո մասին։ Հիշենք անկումային բուրժուական գրականության-դեկադանսի ներկայացուցիչների դատողությունները սիրո մասին, որ սերն ամենից շատ ճակատագրին ենթակա զգացում է, որ ամբողջովին գտնվում է խորհրդավոր և խարդախ բախտի ճիրաններում։

Որ հերոսուհին մեր օրերի մարդը չէ, այլ դուրս է հանված բուրժուական-անկումային գրականության փոշու միջից՝ ապացուցում է նաև մեկ ուրիշ, նույնքան արտառոց նրա ցանկությունը. խոսքս հերոսուհու սիրո երազանքի օրեկտին է վերաբերում։ Ո՞վ է նրա ցանկացած տղան, մեր օրերի հերոսը։ Լսենք նրա խոստովանությունը իր երազների ու պարտ տղայի մասին.

Հեծած փրփրաբաշ, ճերմակ երիվար,
 Հագած պղնձե գեմեք ու զրահ՝
 Թափառում է նա աշխարհից-աշխարհ
 Եւ ինձ է փնտռում աշխարհի վրա։
 Սիրահար սրտում անունն իմ մաքուր՝
 Անցնում է ամեն ամբողջ ու ուտան,
 Ինձ է հարցնում՝ ընկած դռնե-դուռ,
 Ու դեռ չի գտնում ճանապարհն իմ տան։

(Ընդդժումներն իմն են — Հր. Գ.)

Հերոսուհու այժմեականությունից կտրվելու այս ցանկությունը նույնպես դալիս է անկումային գրականությունից։

5

Վերևում մենք արդեն նշեցինք, որ Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունների առաջին երկու ժողովածուների այս վրիպումները հետևանք են այն բանի, որ հեղինակը հաճախ փոխանակ իրական կյանքը ուսումնասիրելու, սովետական երիտասարդների հոգու խորքը թափանցելու, թաղվել է մերկ դրքայնության մեջ, երբեմն ընթացել է ընդօրինակելու, էպիգոնության թեթև հանապարհով։ Հներին նմանվելու ցանկությունը խանգարում էր երիտասարդ բանաստեղծուհուն՝ արտահայտել իր կենդանի զգացումները։ Գրքայնության մեջ թաղվելը, անցյալի գրականության անքննադատ յուրացումը, հաճախ բանաստեղծուհուն զրկում էր սեփական ձայնով խոսելու հնարավորությունից։ Ս. Կապուտիկյանի այդ կարգի բանաստեղծությունները դուրկ էին ինքնուրույնությունից, նրանց մեջ բացակայում էին այժմեականության հետ խորապես կապված լինելու զգացումը, մեր հասարակարգի ծնած նոր կենսական ուժերի զգացումը, սովետական նոր մարդու բնավորության անկրկնելի գծերի առկայությունը։

1 Ս. Կապուտիկյան, «Օրերի հետ», Երևան, Հայպետհրատ, 1945, էջ 30։

2 Նույն տեղում, էջ 26։

Մենք խոսում ենք Ս. Կապուտիկյանի անցյալ սխալների մասին նախ այն պատճառով, որ դրանք բնորոշ են ոչ միայն Ս. Կապուտիկյանի, այլև նրա սերնդի մի շարք այլ բանաստեղծների համար, և ոմանց մոտ այդ սխալները դեռ վերջնականապես չեն հաղթահարված, և երկրորդ՝ որպեսզի ճիշտ նշենք ստեղծագործական որոնումների այն ուղին, որ բերեց երիտասարդ բանաստեղծունուն խոշոր հաջողության:

Ս. Կապուտիկյանի անցյալ գործերի երկրորդ լուրջ թերությունն այն էր, որ նա մի քիչ ավելի էր տարվում այն ամենով, ինչ կեղծ-ռոմանտիկական շղարշով է պարուրված (սեր, թախիծ, մանկության հուշեր, ծերունի մոր կերպարը և այլն), այլ կերպ ասած՝ նվացող, լալկան մոտիվներով: Սա, իհարկե, նշանակում է դնալ թույլ դիմագրության ճանապարհով, որովհետև լալկան թեմատիկան ինքնին ավելի «հուզական» է և ավելի հեշտ է բանաստեղծական պատկերավորում ստանում, մինչդեռ կյանքի առօրյան թվում է պոետացման ավելի դժվար ենթակա: Սակայն պոետի վարպետությունն ու հասունությունն արտահայտվում են՝ երբ նա դժվար թեմաներ է յուրացնում և ոչ թե հեշտ ճանապարհով է ընթանում:

Մայակովսկին իր հոգիվածներից մեկում գրում էր. «Լալկան (նվացող) դործ դրելը հեշտ է, — նա ճմլկտացնում է սիրտը ոչ թե խոսքի մշակմամբ, այլ բանաստեղծության հետ կապված կողմնակի զուգահեռ նվացող հիշողություններով: Իմ անճոռնի բեղեմոտ-բանաստեղծություններից մեկին ես ավելացրել էի մի այսպիսի դրախտային պոչ:

Я хочу быть понят моей страной,

а не буду понят —

что ж?!

По родной стране

пройду стороной,

Как проходит

косой дождь¹.

Չնայած ռոմանսային խիստ զգայունությանը (հասարակությունը ձեռքը տանում է թաշկինակին), ես այդ գեղեցիկ, անձրևից թրջված փետուրները պոկեցի»²:

Սեփական ստեղծագործության նկատմամբ այդպիսի խիստ պահանջկոտություն ցուցաբերելով, բանաստեղծական խոսքի գերազանց մշակման էանապարհով է ձեռք բերվում վարպետությունը: Այդ ճանապարհով միայն կարելի է խուսափել հեշտ թեմաներ ընտրելուց և բանաստեղծական պատրաստի ձևերն ընդօրինակելուց, և կարողանալ կյանքի ամեն մի երևույթ բանաստեղծության նյութ դարձնել, հասցնելով այն գերազանց հուզականության և բանաստեղծական պատկերավորության:

Ս. Կապուտիկյանի առաջին ժողովածուների այդ ձախողված բանաստեղծությունները, բնականաբար, պետք է անհաջողության մատնվեն: Մեր մե-

¹ «Ես ուզում եմ հասկանալի լինել իմ երկրին, իսկ եթե չհասկացվեմ, ինչ արած: Հայրենի երկրով կանցնեմ կողքանց, ինչպես շեղ անձրևն է անցնում» (Տողայի թարգմ. Հր. Գր.):

² В. Маяковский, Полное собр. соч., Москва, ОГИЗ, 1941, т. 10, стр. 314.

միւլը և ընթերցող հասարակությունը անողոք քննադատության ենթարկեցին այն, դեռ առաջին ժողովածուն լույս տեսնելու կապակցությամբ: Ս. Կապուտիկյանը, իհարկե, անհրաժեշտ հետևություններ արեց այդ քննադատությունից: Նրա բանաստեղծությունների երկրորդ գիրքը՝ «Զանգվի ափին»-ը կապես տարբերվում էր առաջինից: Սակայն այդ գիրքը ևս, իր բոլոր արժանիքներով հանդերձ, դեռ զուրկ չէր նախորդ սխալներից: Այս գրքում ևս առկա էին անկումային տրամադրություններ, զաղափարական սայթաքումներ, գրքայնություն և էպիգոնության որոշ տարրեր: Դրանք արտահայտված էին հատկապես «Զղջում», «Հայրենիքի սերը», «Աղջիկներին», «Երևանյան երգ», «Նրա-դանք Զանգվի ափին», «Երջանկության մասին», «Երգ մարդու մասին» և այլ բանաստեղծություններում:

Տարբեր բառը ևս հատկապես ընդգծեցի, որովհետև թվածս բանաստեղծությունների մեջ ևս կան առողջ սաղմեր, այն, ինչ տիպիկական է ու բնորոշ երիտասարդ բանաստեղծուհու համար: Եվ որովհետև շատ հաճախ նա անհրաժեշտ լրջությամբ չէր մշակում իր բանաստեղծությունները, ստացվում էր այն, որ կամ առողջ մտահղացումը կորչում էր սխալ պատկերի կամ անհաջող համեմատության հետևանքով և կամ, ընդհակառակը, լավ հաջողված պատկերը արժեքազրկվում էր սխալ մտահղացման հետևանքով: Այդ սխալները մեծ մասամբ շտապողականության, մակերեսայնության արդյունք էին: Բանաստեղծուհին դեռևս չունեւ անհրաժեշտ ներքին կարգապահություն, կազմակերպվածություն, հստակ մտահղացում:

Սակայն, հիմնականում, այդ երկրորդ ժողովածուով բանաստեղծուհին արդեն ճիշտ ճանապարհ էլինելու փորձեր էր անում: Այդ նոր ուղին նշել էր սովետական դարաշրջանի լավագույն, ամենատաղանդավոր բանաստեղծը, սոցիալիստական պոեզիայի հիմնադիրը՝ Վ. Մայակովսկին: Մայակովսկուն աշակերտելու ճանապարհն էր բռնել նաև Ս. Կապուտիկյանը: Նա ձգտում էր արդեն իր բանաստեղծական խոսքը նույնպես դարձնել պայքարի զենք նոր կյանք կառուցող մարդկության համար: Իրեն համեմատելով գնացքի սլաքավարի հետ՝ Ս. Կապուտիկյանը աշխատում էր, որ իր երգն էլ լինի՝

... Երգու երթի դեմ՝ կանաչ դրոշ,
Որ մարդը վստահ, վստահ անցնի
Իր ճանապարհը, անցնի որոշ՝

Սակայն, որպեսզի սովետական գրողի դերի այդ ճիշտ ըմբռնումը նա կարողանար իրականություն դարձնել, նա պետք է հագեցներ իր ստեղծագործությունը պարտիականությամբ, դիալեկտիկական մատերիալիզմի, մարքսիզմ-լենինիզմի խորը գաղափարայնությամբ, նա պետք է լիովին տիրապետեր սոցիալիստական ուսման ստեղծագործական մեթոդին: Իսկ ստեղծագործական այդ մեթոդի առաջին պահանջը՝ դա իրականության ճշմարտացի պատկերումն է իր ռեուլուցիոն զարգացման պրոցեսում, կյանքի տիպիկական երևույթների և նրանց զարգացման տեղեկեցի ճիշտ ըմբռնումն ու պատկերումն է: Այս էր, որ դեռ լրիվ չափով չէր արտահայտված Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունների երկրորդ ժողովածուում: Կյանքի տիպիկական երևույթն այն է, ինչ

¹ Ս. Կապուտիկյան, «Զանգվի ափին», Երևան, Հայպետհրատ, 1947, էջ 3:

արտահայտում է իսկական, իրական կյանքում եղած զարգացման տեղեկյր հ ոչ թե այս կամ այն մասնակի երևույթը: Սովետական երիտասարդության համար տիպիկականը ոչ թե անկումային տրամադրություններն են, կամ խորտակված սերը, այլ առողջ զաղափարականությունն ու երջանիկ սերը, որն արդյունք է նրանց կոմունիստական դաստիարակության, նրանց բարձր բարոյականության:

Սա չի նշանակում, իհարկե, որ մեր իրականության մեջ չի կարող պատահել խորտակված սեր կամ անկումային տրամադրություններ ունեցող երիտասարդ: Դրանք, իհարկե, կան և կլինեն, սակայն, որպես մասնակի երևույթներ, որոնք բնորոշ ու տիպիկական չեն մեր իրականության համար: Իսկ գրողն իրավունք չունի վերցնել մասնակի երևույթը և ընդհանրացնել: Նա պետք է միշտ տեսնի իրականության մեջ տիպիկականը:

Գրողը միշտ պետք է կանգնած լինի զաղափարական այնպիսի բարձրություն վրա, որ կարողանա կյանքի բարդ իրադարձությունների մեջ միշտ ձիշտ նկատել ղեպերի զարգացման ընդհանուր պատմական իմաստը, և ոչ թե պատահական ղեպերը վերցնի և պատկերելով այն՝ ընդհանրացնի: Այդպիսի ղեպում ուզում է այդ հեղինակը, թե ոչ՝ օբեկտիվորեն նա մեղանշում է ճշմարտության ղեմ, կյանքը պատկերում է ծուռ հայելու մեջ:

Ի առանձին բանաստեղծություններով հաճախ այդ վիճակում ընկնում էր Ս. Կապուտիկյանը, չնայած կրկնում ենք, նրա ստեղծագործության ընդհանուր առողջ տենդենցին:

6

Մեր պարտիայի Կենտկոմի պատմական որոշումները իդեոլոգիական հարցերի վերաբերյալ, ընկեր Ժդանովի զեկուցումը «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին՝ վճռական նշանակություն ունեցան ինչպես մեր բոլոր գրողների, նույնպես և Ս. Կապուտիկյանի զաղափարական-ստեղծագործական աճի համար:

Ընկեր Ժդանովն իր զեկուցման մեջ սովետական գրողների առաջ պահանջ դրեց՝ մինչև վերջ թափանցել սովետական մարդու հոգու խորքը, խորապես գիտակցել նրա մեծ պայքարի ու ստեղծագործական աշխատանքի և կառուցումների ողջ էությունը, և այդ նպատակին ծառայեցնել իրենց ստեղծագործությունները:

«Ցույց տալ սովետական մարդկանց այս նոր բարձր հատկությունները, — ասում է ընկեր Ժդանովը, — ցույց տալ մեր ժողովրդին ոչ միայն նրա այսօրվա վիճակում, այլև տեսնել նրա վաղվա օրը, օգնել լուսարձակով լուսավորելու սուսըրնթաց ուղին, — այս է յուրաքանչյուր բարեխիղճ սովետական գրողի խնդիրը: Գրողը չի կարող իրադարձությունների պոչից քարշ գալ, նա պարտավոր է ընթանալ ժողովրդի առաջավոր շարքերում, ժողովրդին ցույց տալով նրա զարգացման ուղին: Ղեկավարվելով սոցիալիստական ռեալիզմի մեթոդով, բարեխիղճորեն և ուշադիր ուսումնասիրելով մեր իրականությունը, աշխատելով ավելի խորը ներթափանցել մեր զարգացման պրոցեսների էության մեջ, գրողը պետք է դաստիարակի ժողովրդին և զաղափարապես դին նրան: Ընտրելով սովետական մարդու լավագույն զգացմունքները և հատկությունները, նրա առաջ բաց առելով նրա վաղվա օրը, մենք պետք է միևնույն ժամանակ մեր մարդկանց ցույց տանք, թե նրանք ինչպիսին

չպետք է լինեն, պետք է խարազանենք երեկվա մնացուկները, որոնք սովետական մարդկանց խանգարում են առաջ ընթանալ: Սովետական դրողները պետք է շղթան ժողովրդին, պետությանը, պարտիային՝ դաստիարակելու մեր երիտասարդությանը՝ դարձնելով նրան առույգ, իր ուժերին հավատացող, ոչ մի սովորությունից չվախեցող¹:

Այդ պատմական որոշումներից իր համար անհրաժեշտ հետևություններ տնելով՝ Ս. Կապուտիկյանը հասկացավ վճռական վերակառուցման անհրաժեշտությունը և ընտրեց ճիշտ ճանապարհ՝ դնաց Մոսկվա՝ ուսանելու, այնուհետև մի քանի ճանապարհորդություն կատարեց դեպի Սովետական Միության դանազան քաղաքներն ու միութենական ռեսպուբլիկաները: Եվ նա տեսավ, կարողացավ բանաստեղծորեն տեսնել—երկրի կյանքն իր հոյակապ զարգացման ընթացքում: Այդ է վկայում նրա բանաստեղծությունների երրորդ ժողովածուն՝ Ստալինյան մրցանակի արժանացած «Իմ հարազատները» գիրքը:

Երիտասարդ բանաստեղծուհու ստեղծագործական վերակառուցման հաջողությունը խոշոր չափով նպաստեց նաև Մայակովսկու տրադիցիաներին հետևելու նրա ձգտումը:

Մայակովսկին առաջինը բանաստեղծական չգերադանցված ուժով երգեց մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը: Այդ մեծ բարեկամությունը այսօր էլ հանդիսանում է սովետական գրականության գլխավոր թեմաներից մեկը: Հիմնականում այդ թեմային է նվիրված նաև Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունների նոր ժողովածուն:

Երբ հիմնական գաղափարը շատ լավ արտահայտված է նրա վերնագրի մեջ՝ «Իմ հարազատները»: Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաներում և քաղաքներում բանաստեղծուհին իրեն զգացել է ինչպես հարազատ տաս մեջ, հարազատ մարդկանցով շրջապատված, որոնք անբաժան կերպով զոգված են ստալինյան բարեկամությամբ և իրականացնում են կոմունիզմի միասնական կառուցման մեծ գործը: Սովետական բոլոր մարդկանց այդ նոր, սոցիալիստական զգացումներն ու նրանց ձգտումների միասնությունը Ս. Կապուտիկյանը կարողացել է մեծ հուզականությամբ ու տպավորիչ կերպով արտահայտել իր բանաստեղծությունների մեջ:

Անցած իմ մեծ երկրի ճամբաները շռայլ,

Ես դարձել եմ քաղաքն իմ հայրենի:

Ես իմ տունն եմ դարձել ընդմիշտ մտերմացած

Հազարավոր մարդկանց ու վայրերի:

Հարազատների նման ես կապվել եմ նրանց,

Նրանց բախտին, կյանքին, առօրյային²:

Վերադառնալով «Ֆալաֆն իմ հայրենի» և «Իմ տունը»՝ բանաստեղծուհին մի անգամ ևս հասկանում է, որ սոցիալիստական հասարակության մեջ, սովետական ժողովուրդների միասնական ընտանիքում այդ հին հասկացողությունները նոր իմաստ են ստանում, նոր, կերպ են հնչում: Ընդարձակվել են «Իմ տան» պատերը, «Իմ հայրենի քաղաքի» սահմանները, «հարազատ տուն» ծան-

¹ Ընկեր Ա. Ա. Ժդանովի ղեկուցումը «Զվեդզա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին. «Սովետական գրականություն», 1946, № 9—10, էջ 28:

² Ս. Կապուտիկյան, «Իմ հարազատները», Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 115:

րակշիռ խոսքն արդեն չի նշանակում մի նեղ բնակարան: Դեռ ռևոլուցիայի առաջին տարիներին նրա մեծ երգիչը՝ Մայակովսկին երազում էր կոմունիզմի լուսապայծառ օրվա մասին, երազում էր այն մասին, «որ՝ «ընկեր» առաջին խակ կանչին շրջվի աշխարհը ողջ»: Մայակովսկին տեսնում էր տեսնել կոմունիստական գալիքի հաստատումը, երբ մարդիկ կապրեն «ոչ թե տուն-խցերին ղո՛հ դարձած», այլ «միասնական մարդկային հանրակացարանով», նա երազում էր կոմունիստական հասարակարգի մարդկանց ազնիվ եղբայրության մասին, այն մասին, «որ այսուհետ հարազատներ լինեն ինձ համար որպես հայր— գոնե աշխարհն ամբողջ, որպես մայր՝ գոնե երկիրը ողջ»¹: Ս. Կապուտիկյանի «Իմ հարազատները» բանաստեղծությունների ժողովածուն յուրահատուկ բանաստեղծական պատասխան է սոցիալիստական պոեզիայի հիմնադրի այդ,— այժմ արդեն կարելի է ասել,— իրոք որ մարգարեական երազանքին: Ս. Կապուտիկյանը պատկերում է կոմունիզմի կոնկրետ, արդեն իրականացած գծերը, որը նա տեսնում է սովետական երկրում.

...Ու դարձել եմ հիմա ու ապրում եմ նորից
Իմ հարազատ, իմ լավ նրեանում.
Ես սիրում եմ նրան, տուն է եղել նա ինձ,
Բայց ինձ համար հիմա նա չայնանում,
Նա ձգվում է, դառնում երկիր մի աննկուն,
Նա փռվում է հարուստ, հզոր, հպարտ,
Իմ տան նման՝ իմն է այնտեղ ամեն անկյուն,
Հարազատ է այնտեղ ամեն մի մարդ:
Ապրում են ինձ, մորս, մանկանս հետ մեկտեղ
Իմ հարկի տակ հազար-հազարավոր մարդիկ,
Իմ տանը, նա մեծ է, նա փռվում է շքեղ
Մինչև խաղաղական, մինչև Բալթիկ.
Չորս կողմերում ձգվող կարմիր սահմանն անշեղ՝
Չորս պատերն են նրա՝ հավերժ անխախտելի,
Ու Կրեմլից՝ կանգնած պատուհանի առջև՝
Ստալինն է նայում նրա հեռուներին...²

Որպեսզի հասկանանք, թե որքան է փոխվել Ս. Կապուտիկյանի բանաստեղծական աշխարհազգացումը՝ բավական է համեմատել այս տողերը, ինչպես և այս նոր ժողովածուից բազմաթիվ այլ տողեր՝ 1947 թվականին լույս տեսած «Ձանգվի ափին» ժողովածուի «Նրեանյան երգ» բանաստեղծության հետ: Այս վերջին բանաստեղծության գաղափարական և ազգային սահմանափակությունն ակնհայտ զգացվում է բանաստեղծության եզրափակիչ չորս տողի մեջ, ուր բանաստեղծուհին խոսում է իր այն ժամանակվա նվիրական երազանքի մասին՝ ինչ էլ պատահի ծերանալ ու մեռնել երեանյան փողոցների փոշում.

Ոկ, թող քամին փոշի բերի, փոփ թող մեր ճանապարհին,
Թող մենք այրվենք շոգին, տապին՝ մեր արևի անմար հրով,

¹ Մայակովսկու բոլոր ցիտաաները վերցված են «ВОО ЗТО» պոեմից և մեջ են բերված բառացի թարգմանությամբ: Հր. Գր.

² Ս. Կապուտիկյան, «Իմ հարազատները», Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 118:

Միայն նայենք և աչքը մեր միշտ դեմ առնի Մասիս սարին,
Ու ծերանանք Երևանի փողոցներում թափառելով...¹

Ինչպե՞ս է հապա փոխվել Ս. Կապուտիկյանի աշխարհազգացումը, եթե այսօր նա իրեն հպարտ է զգում հավիտյան Մոսկվայի փողոցի լույս անցորդ լինելու համար.

Քայլում եմ այս փողոցով ու թվում է սակայն ինձ,
Բե ես կանգնած եմ ահա յեռան ծայրին մի հողոր,
Ու տեսնում եմ այստեղից ես աշխարհները բոլոր,
Ու աշխարհները բոլոր ինձ տեսնում են այստեղից²:

Մեծագույն սիրով խոսելով սովետական հայրենիքի մայրաքաղաքի մասին՝ Մայակովսկին կոչ էր անում սովետական պատանիներին՝ «Հայացքներդ Մոսկվային», որովհետև «Մոսկվան ոչ թե որպես ռուսի է ինձ համար թանկ, այլ որպես հրեղեն դրոշակ», — գրում էր նա: Նարունակելով իր ուսուցչի միտքը՝ Ս. Կապուտիկյանը գրում է.

|

Նայում եմ Երկար, և այս պարզադեմ
Քարտեզը աչքիս թվում է մի խոր
Խորհրդանշան՝
Ու թվում է, որ
Շառալիղներն այս Երկարում են դեռ,
Երկարում, ձգվում, օղակում են ողջ
Հողագունդը, և գալիս են, հատվում
Այստեղ՝ Մոսկվայի սրտում այս անխոնջ,
Ռեպուցիայի հրապարակում...³

Այս նա «որպես սեր, որպես բաղձանք, որպես երգում» շնչում է հարա-
ռատ Մոսկվային այն մասին, թե՛

Ուզում եմ ես այնպես ապրել Երևանում,
Որ արժանի լինեմ միշտ քեզ...⁵

Իր նոր ժողովածուում Ս. Կապուտիկյանը կարողացել է էլ ավելի խորացնել ու ընդարձակել սովետական ժողովուրդների եղբայրական անխախտ բարեկամության թեման: Բարեկամություն, որ սրբագործված է միութենական բոլոր ժողովուրդների լավագույն զավակների համատեղ թափած արյամբ: Ուրախ, լատվիական մեծ գրող Ռայնիսի գերեզմանի մոտ բանաստեղծուհին հանդիպում է զոհված հայ զինվորի շիրմաքարին, և դա առիթ է տալիս նրան կրկնակի ջերմ խոսքերով դիմել եղբայրական լատվիական ժողովրդին.

1 Ս. Կապուտիկյան, «Ձանդվի ափին», Երևան, Հայպետհրատ, 1947, էջ 32:

2 Ս. Կապուտիկյան, «Իմ հարազատները», Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 15:

3 Վր. Մայակովսկի, Ռևտի բրկեր, Երևան, Հայպետհրատ, 1950, հատ. 1-ին, էջ 155:

4 Ս. Կապուտիկյան, «Իմ հարազատները», Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 23:

5 Նույն տեղում, էջ 46:

Բայց ի՞նչ ասեմ արդյոք, ես ի՞նչ խորհեմ կրկին,
 Որ առավել լինի խոստուն ու զորավոր,
 Քան այն, որ հանգչում է քո Ռայնիսի կողքին՝
 Ռիգայի մոտ ընկած մի հայ զինվոր...¹

Սովետական ժողովուրդների եղբայրությունը ցեմենտված է նրանց դա-
 դափարական ձգտումների միասնությամբ: Ս. Կապուտիկյանը համոզված գի-
 տն է, որ լայնածավալ սովետական հայրենիքի ամեն մի անկյունում մարդիկ
 անխոնջ աշխատանքի են լծված՝

Որ անցնի, անցնի երկիրն իմ սիրած՝
 Կոմունիզմի լայն շքամուտքով ներս...²

Եվ այսպես, նրա բանաստեղծության մեջ ծնունդ է առնում «Ուրալմաշի»
 համեստ բանվորը, որը, «ինչպես նավապետ, նստած ղեկին»՝ հսկում է պող-
 պատյու՝ ռելսերի թողարկումը, և համոզված է, որ իր և ընկերների հերոսա-
 կան աշխատանքի արդյունք այդ ռելսերը՝

Տանում են ոչ լոկ դեպի Կիև,
 Դեպի Ֆերգանա, Բաքու, Տալլին,
 Նրանք տանում են, տանում են նաև
 Դեպի Կոմունիզմ, դեպի գալիք...³

Կոմունիզմ կառուցող մարդկանց դեպի գալիքն ունեցող այդ մեծ հավա-
 տով է համակված նաև բանաստեղծուհին, նրա գրած ամեն մի տողը: Այդ
 հավատն է կազմում նրա բանաստեղծական ոգեշնչման պաթոսը: Եվ Ուրալը
 դառնում է նրա համար նույնքան հարազատ և բաղձալի, որքան Երևանը, ինչ-
 ունե՝ Վրաստանը, Ադրբեջանը, Ռիգան, Ուկրաինան, Ղաղախստանը: Կիևի
 դիմապատկեր փողոցում՝ Կրեշչատիկում քայլելով՝ նա համոզված կալուղ է ասել
 իր ուկրաինացի բարեկամներին:

Մենք միասին ենք անցել ճանապարհները անցած,
 Ճանապարհները գալիք անցնելու ենք միասին...⁴

Սովետական հայրենիքի ժողովուրդների միասնության և համախմբվա-
 ծության մեծ զգացմունքը, նրանց անսահման ուժ է տալիս, համոզվածու-
 թյուն աշխատանքի ու պայքարի մեջ: Հանգիստ ու համոզված են նաչում սո-
 վետական մարդիկ Կոմունիստական գալիքին: Հանգիստ ու համոզված, իրենց
 մեծ ուժի կատարյալ գիտակցությամբ, պայքարում են նրանք հանուն խաղա-
 դության ամբողջ աշխարհում: Պատերազմի իմպերիալիստական հրձիգների
 ոչ մի տեսակի պրովոկացիաները նրանց համար ահավոր չեն: Ահա թե ինչու,
 երբ Ս. Կապուտիկյանին ասում են, թե ամերիկացիները «Մաուսի վրա

¹ Ս. Կապուտիկյան, «Իմ հարադատները», Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 71:

² Նույն տեղում, էջ 57:

³ Նույն տեղում, էջ 55:

⁴ Նույն տեղում, էջ 85:

փառնում են սոյան տապանը» և որ «կուտակում են բենքեր ու զրահ, ուղում են տրորել Հայաստանը», նա հանգիստ պատասխանում է.

... Նայեք Կրեմլին.

Ինչ վատահ են կանգնած պարիսպները,
Աշխարհում մորիկ է մոլեգին,
Իսկ նա լեռան պես աներեր է...

Նրբ նրան տաում են «բայց մոտ է այնպես քո հողին թյուրքական սահմանը», որ «բավական է Արաքսն անցնես, և արդեն կերևա նրեանը», նա նույն հանգիստ համոզվածությամբ պատասխանում է.

Ծա ասում եմ.— Արաքսը հին չէ,
Ուրիշ են Արաքսը, աշխարհը,
Այն ափից այս ափը մինչև
Մոսկվայով է անցնում ճանապարհը...¹

Ոգեշնչված բազմաթիվ տողեր իր այս ժողովածուում նվիրել է Ս. Կապուտիկյանը աղնիվ ու հերոսական ոուս մեծ ժողովրդին, որը հավասար ազգությունների ընտանիքում առաջին ու մեծ եղբայրն է հանդիսանում և որի ջանքերով ու օգնությամբ սովետական բոլոր ռեսպուբլիկաները ծաղկում ու հզորանում են ոչ միայն տնտեսապես, այլև իրենց կուլտուրայով ու հոգեկան աշխարհով: Ռուս մարզն ու ռուս լեզուն սովետական լայնածավալ հայրենիքում դառել են ժողովուրդների մեծ բարեկամության խորհրդանիշ: Դեռևս Մայակովսկին, իր «Մեր պատանեկությունը» բանաստեղծության մեջ գրում էր.

Թեկուզ և լինեի
Նեգր զառամյալ,
Անձանձրույթ,
Անվհատ էլի ես
Ռուսերեն կսովորեի
Հոկ նրա համար,
Որ այդ լեզվով
Խոսել է լենինը²,
(Թարգմ. Խ. Հրաչյանի):

Այդ նույն միտքը, շատ հուզիչ ու գեղեցիկ պատկերավորությամբ արտահայտել է նաև Ս. Կապուտիկյանը իր «Ջամբուլի հոբելյանը Ալմա-Աթայում» բանաստեղծության մեջ.

Ու մեկտեղ մենք հիմա. բերած մեր աչքերում
Մանկությունից սովոր տարբեր հորիզոններ՝
Մենք խոսում ենք, ասես իրար գիտենք վաղուց,
Եվ կամ իրար վաղուց ենք որոնել:

¹ Ս. Կապուտիկյան, «Իմ հարազատները», Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 43:

² Վ. Մայակովսկի, Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 1950, հատ. 1-ին, էջ 155:

Մենք հոժ, բազմալեզու, մեր Երկիրը՝ անծայր,
Թեև եղբայրության մենք նույն խոսքն ենք խոսում,
Բայց եղբայրներ, մենք ո՞նց հասկանայինք իրար,
Ասենք թե չլինե՞ր ուսաց լեզուն...

Սիլվա Կապուտիկյանի նոր ժողովածուն արժանացավ սովետական ժողովրդի և Սովետական կառավարության բարձրագույն գնահատականին — Ստալինյան մրցանակի։ Ստեղծագործական այդ փայլուն հաղթանակը նա ձեռք բերեց՝ ուշադիր լսելով քննադատության ձայնը, ազատագրվելով էպիգոնության ու գրքայնության տարրերից, ավելի սերտորեն կապվելով կյանքի հետ, մեր յազմերանգ կյանքը դարձնելով իր բանաստեղծական ոգեշնչման միակ աղբյուրը և հագեցնելով իր բանաստեղծությունները բուլշևիկյան խորը զաղափարայնությամբ։ Այդ փայլուն հաղթանակը նա ձեռք բերեց՝ հետևողականորեն յուրացնելով սոցիալիստական ռեալիզմի հիմնադիրների՝ Մ. Գորկու և Վլ. Մայակովսկու ստեղծագործական լավագույն արագիցիաները։ Այդ ճանաչարհով նա մտավ Կոմունիստական հասարակություն կառուցողների ավանդարդում լայլուղ պրեյլների առաջավոր շարքերը։